ALIGN քառամյա դրամաշնորհային ծրագիր է, որի նպատակն է բարձրացնել որակավորումների ըմբռնելիությունը, կայունությունն ու փոխանցելիությունը՝ բուհերի համար մշակելով կրթական ծրագրերը ՈԱԾ-ի համապատասխանեցնելու/համադրելու մեխանիզմներ:

Ծրագրի խնդիրներն են:

- Բուհերի և ՈԱ գործակալությունների համար առավել հստակեցնել որակավորումների շրջանակների դերը, դրանց կառուցվածքը, ինչպես նաև ուսանողների ձեռքբերումների տարբեր տեսակների և մակարդակների միջև տարբերությունը
- Բուհերում զարգացնել ՈԱԾ-ին համապատասխանեցված կրթական ծրագրերի մշակումը՝ նպաստելու ուսանողների փոխանակմանը, համատեղ որակավորումների շնորհմանն ու բենչմարքինգի իրականացմանը
- Հնարավորություն տալ ՈԱ գործակալություններին ստուգելու՝ արդյոք կրթական վերջնարդյունքները և դրանց գնահատման մեխանիզմները համապատասխանում են ՈԱԾ-ի մակարդակներիի նկարագրիչներին

Co-funded by the Tempus Programme of the European Union

Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի կողմից:

This project has been funded with support from the European Commission.

Տպագրություններն արտացոլում են հեղինակների տեսակետները, և Եվրոպական Հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում այնտեղ պարունակվող տեղեկատվության համար:

This publication reflects the views only of the author, and the Commission cannot be held responsible for any use which may be made of the information contained therein.

Համակարգող: Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարան
Հասցե: *Թումանյան* 42, Երևան, ՀՀ
Էլ. կայք: align.brusov.am

ALIGN

ACHIEVING AND CHECKING THE ALIGNMENT BETWEEN ACADEMIC PROGRAMMES AND QUALIFICATION FRAMEWORKS

ALIGN *(Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համադրելիության ապահովում և ստուգում)* քառամյա ծրագիր է EACEA N° 35/2012, 6-րդ հայտի շրջանակներում:

Հայաստանից, Ռուսաստանից և Ուկրաինայից ALIGN ծրագրում ներգրավված գործընկերներ հաստատությունների ներկայացուցիչներից կազմված հզոր թիմը ԵՄ փորձագետների աջակցությամբ բեղմնավոր աշխատանք է կատարել ծրագրի սահուն ընթացքն ու արդյունավետ ավարտը ապահովելու նպատակով: Ձեռք են բերվել ALIGN ծրագրի հիմնական արդյունքները.

- Բուհերի և ՈԱ գործակալությունների անձնակազմի կարողությունների հզորացում՝ ապահովելու և ստուգելու կրթական ծրագրերի համադրելիությունը ՈԱՇ-ին
- Կրթական ծրագրերը ՈԱՇ-ին համադրելու մեխանիզմների ստեղծում բուհերի համար
- ՈԱ գործակալությունների համար համապատասխան մեխանիզմների ստեղծում՝ այդ համադրելիությունը ստուգելու նպատակով
- Յուրաքանչյուր բուհում երկուական կրթական ծրագրի վերանայում և արտաքին գնահատման իրականացում

Ծրագրի հիմնական նպատակն է ծրագրում ներգրավված յուրաքանչյուր բուհի երկուական կրթական ծրագիր վերանայել և վերամշակել՝ համադրելով դրանք որակավորումների ազգային շրջանակների հետ՝ հաշվի առնելով նաև բարձրագույն կրթության համակարգի արդի մոտեցումներն ու զարգացման միտումները: Ծրագրի այս նպատակն իրականացնելու համար դրամաշնորհային ծրագրի գործընկեր հաստատությունների ներկայացուցիչները մասնակցել են մի շարք վերապատրաստումների ու քննարկումների և մշակել են կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակներին համապատասխանեցնելու ուղեցույցներ:

Ծրագիրը ղեկավարվում է Կառավարման խորհրդի, ղեկավար թիմի և Հայաստանի, Ռուսաստանի ու Ուկրաինայի տեղական համակարգողների կողմից:

Թիմային աշխատանքն ու ղեկավարող օղակների արդյունավետ համագործակցությունը նպաստում են ծրագրի սահուն իրականացմանն ու նպատակների իրագործմանը: